

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

## Րաֆֆի Կ. Հովհաննիսյան

-ՀՀ արտաքին գործերի առաջին նախարար
-Ավարտել է Կալիֆորնիայի պետական համալսարանի Լոս Անջելեսի մասնաճյուղի (UCLA) պատմության եւ արեւելագիտության զույգ ամբիոնները
-Մագիստրոսի տիտղոսն ստացել է Թաֆտս համալսարանի Միջազգային օրենքի եւ դիվանագիտության Ֆլեչեր ինստիտուտում
-Իրավաբանության դոկտորի աստիճանն ստացել է Վաշինգտոնի Ջորջթաուն համալսարանի Իրավաբանական կենտրոնում՝ պաշտպանելով «Համատիեզերական իրավասության դասական սկզբունքը եւ Հայոց ցեղասպանությունը» վերտառությամբ ատենախոսությունը
-Աշխատել է Թաֆտս համալսարանում՝ որպես հայոց պատմության դասախոս
-Հիմնադրել եւ ղեկավարել է Հայ փաստաբանների միությունը
-1990-ի հունվարին վերադառնալով Հայրենիք՝ տնօրինել է Հայկական համագումարի աղետի գոտու վերականգնման գրասենյակը
-Երեւանում նախաձեռնել եւ մինչեւ օրս ղեկավարում է Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը
-Հեղինակել է տասնյակ ուսումնասիրություններ, մենագրություններ ու հոդվածներ
-Ամուսնացած է, ունի 5 զավակ՝ Կարինը, Տարոնը, Վանը, Շուշին, Արմեն-Ռիչարդը: Կինը՝ Արմինե Հովհաննիսյանը, Երեւանում գործող «Պատանեկան նվաճումներ» կազմակերպության նախագահն է: 2000 թվականից Րաֆֆին եւ Արմինեն հիմնադրել են Օրրան հասարակական բարեգործական կազմակերպությունը, որը մինչ օրս օգնել է հազարավոր անապահով ընտանիքների երեխաների եւ միայնակ ծերերի

## Ալավերդյան Լարիսա Ասատուրի

ՀՀ մարդու իրավունքների առաջին պաշտպան, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ գործադիր տնօրեն

## Խաչատրյան Վարդան Վահանի

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի ավագ դասախոս

## Բախշյան Անահիտ Ներսեսի

Երեւանի թիվ 27 միջնակարգ դպրոցի տնօրեն

## Սաֆարյան Ստյոպա Սերյոժայի

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի գիտական ղեկավար

## Բախչինյան Հենրիկ Գրիգորի

Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն

## Փոստանջյան Զարուհի Համազասպի

ՀՀ փաստաբանների պալատի անդամ

## Մարտիրոսյան Արմեն Պավլիկի

Ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու

## Արիստակեսյան Մովսես Արիստակեսի

Տնտեսական իրավունքի կենտրոնի նախագահ

## Հակոբյան Ռաֆիկ Սերգեյի

ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի պրոֆեսոր

## Թադեւոսյան Զոյա Աղվանի

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսագիտական հարաբերությունների ամբիոնի դոցենտ

## Սարգսյան Տիգրան Լեւոնի

Թալինի թիվ 1 միջնակարգ դպրոցի ուսուցիչ, ավագանու անդամ

## Հարությունյան Սամվել Վաղարշակի

Գորիսի նախկին քաղաքապետ, պատմաբան

## Հարությունյան Միքայել Անանիկի

Պատմական հուշարձանների հայկական ընկերության փոխնախագահ

## ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ

### Ք. ԵՐԵՎԱՆ

| գրասենյակ | գրասենյակի հասցե | գրասենյակի հեռախոս |
|---|---|---|
| *Կենտրոն* | *Մոսկովյան 31, բն. 76/ա* | *536913* |
| Նոր Նորք 2 | Նորքի 2-րդ զանգված, Գայի պողոտա, ունիվերսամի դիմացի կրպակ | 536913 |
| Նոր Նորք 9 | Նորքի 9-րդ զանգված, Վիլնյուսի փողոց | 536913 |
| Ավան | Բաբաջանյան 143 | 536913 |
| Աջափնյակ | Շինարարների 15 | 536913 |
| Դավիթաշեն | Դավիթաշեն 1-ին թաղ., 52 / 2 շ. | 369181 |
| Քան.-Ձեյթ. | Հրաչյա Ներսիսյան փ., 1-ին շենք | 287875 |
| Նորք-Մարաշ | Արմենակյան 10 | 536913 |
| Մալ.-Սեբ. 1 | Առնո Բաբաջանյան 51/1, 1-ին հարկ | 722447 |
| Մալ.-Սեբ. 2 | Առնո Բաբաջանյան 1/1 | 745171 |
| Էրեբունի | Էրեբունի 28 | 452595 |
| Շենգավիթ | Չեխովի 10 | 536913 |
| Արաբկիր 1 | Գյուլբենկյան 43, բն. 14 | 268032 |
| Արաբկիր 2 | Վրացական 2 | 255213 |

### ՇՐՋԱՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Գյումրի | Սայաթ-Նովա 5, բն.2 | 0312-23320 |
| Վանաձոր | Տիգրան Մեծի 8, բն.41 | 0322-45426 |
| Աշտարակ | Սիսակյան 25 | 0232-34174 |
| Արտաշատ | Օգոստոսի 23 փ. | 010-536913 |
| Նոր Հաճըն | Չարենցի փողոց | 010-536913 |
| Մարտունի | Մյասնիկյան 20, կենցաղի տուն, 2-րդ հարկ | 010-536913 |
| Դիլիջան | Գետափնյա 12 | 02680-3932 |
| Եղեգնաձոր | Սեւակի 9 | 0281-22044 |
| Սիսիան | Իսրայելյան 33ա | 02856-2856 |
| Վարդենիս | Երեւանյան փ. | 0269-21380 |
| Իջեւան | Անկախության 18, բն.19 | 010-536913 |
| Մասիս | Հերացու փ., հանրակացարանի հարեւան. | 010-536913 |
| Գավառ | Կենցաղի տուն | 0264-21869 |
| Բերդ | Մաշտոցի 25 | 0267-22055 |
| Թալին | Խանջյան 3 | 02490-2333 |
| Եղվարդ | Տերյան 12 | 0224-22444 |
| Չարենցավան | 3-րդ թաղամաս, 39 շենքի մոտակայք | 010-536913 |
| Արթիկ | Նժդեհի 4, 4-րդ հարկ, 15 սենյակ | 010-536913 |
| Արմավիր | Հանրապետության 7 | 0237-64609 |
| Էջմիածին | Արարատյան 17 | 010-536913 |
| Կապան | Մ. Ստեփանյանի 2, բն 18 | 010-536913 |
| Գորիս | Մաշտոցի 72 | 0284-22868 |

info@heritage.am www.heritage.am

12 մայիսի 2007թ.
ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ

ՀԱՎԱՏ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ

# ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ




**ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Րաֆֆի Հովհաննիսյան
Լարիսա Ալավերդյան
Վարդան Խաչատրյան
Անահիտ Բախշյան



Մենք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներս, ցանկանալով վերականգնել մեր ազատատենչ նախնիների ոգին ու սերունդներին վերադարձնել իրենց հերոսական ժառանգությունը, խոստանում ենք այնպիսի Հայրենիք, որտեղ.

Մարդու իրավունքը Աստծո հավերժական պարգեւն է եւ ոչ՝ իշխանության ողորմությունը.

Օրենքը իշխանություն է եւ ոչ՝ իշխանություններինը.

Իշխանությունը ծնվում է ժողովրդի կամքով եւ ոչ՝ վարչական կեղծիքով.

Իշխանությունը ուժեղ է ժողովրդի հետ եւ ոչ՝ ժողովրդի դեմ.

Հաղթում են ուժեղն ու արժանավորը եւ ոչ՝ ուժայինն ու փողավորը.

Արցախը մարտահրավեր է, այլ ոչ՝ մարտավարություն.

Կաշառքը հանցագործություն է, այլ ոչ՝ ռազմավարություն.

Հարստությունը վաստակում են, այլ ոչ՝ թալանում.

Հարկերը մուծում են, բայց ոչ՝ մուծվում.

Ազգային ժողովը բարձր քաղաքականություն է, ի շահ ժողովրդի գործող լրջագույն ատյան:



# ՄԵՐ ԱՌԱՋԻՆ 12 ՔԱՅԼԵՐԸ

***12 ուղղություն, որոնք պայմանավորելու են «Ժառանգության» խորհրդարանական գործունեության հիմնական հանձնառությունը:***

## 1. Ազատ խոսք, ազատ մարդ, ազատ երկիր

- Մարդու եւ քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանություն պետական բոլոր մարմինների կողմից
- Ազատ խոսք, բազմակարծություն եւ տեղեկատվության մատչելիություն
- Ժողովրդին հաշվետու եւ օրինական իշխանության ձեւավորում

## 2. Օրինականության հաստատում եւ պայքար կոռուպցիայի դեմ

- Անկախ եւ իրական արդարադատություն
- Հատուկ մարմնի՝ անկախ դատախազի հաստատության հիմնում, որը կընտրվի խորհրդարանի կողմից
- Պետական բյուջե հավաքագրել հավելյալ շուրջ 1,5 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝

ա) ձեռնարկելով օրենքով սահմանված միջոցառումներ՝ ուղղված հանցագործ եղանակով կուտակված հարստության նկատմամբ օրինականության վերականգնմանը, այն վերադարձնելով պետության տնօրինությանը՝ հետագայում ազատ, օրինական, մրցակցային եղանակով մասնավորեցնելու նպատակով

բ) կիրառելով 2 միլիարդ դրամը գերազանցող սեփականության հանդեպ միանվագ «համաներող» նվազագույն հարկ

գ) ստվերային տնտեսության գերակշիռ մասը բերելով օրինական հարկման դաշտ, որի հաշվին արդեն 2008թ. պետական բյուջե մուտքագրել առնվազն 800 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

## 3. Սոցիալական արդարության հաստատում, աշխատատեղերի ստեղծում եւ աղքատության հաղթահարում

- Օրինականության հաստատման եւ հակակոռուպցիոն միջոցառումների շնորհիվ հավաքագրված միջոցների ուղղում

ա) բյուջետային աշխատողների աշխատավարձերի ավելացմանը 20000 դրամով

բ) խոցելի խմբերի (ծերեր, հաշմանդամներ, փախստականներ, վետերաններ եւ այլն) կենսաթոշակների նվազագույն չափի բարձրացմանը մինչեւ նվազագույն պարենային զամբյուղի՝ 30000 դրամի հաշվարկով

գ) սոցիալական նպաստների ավելացմանը 10000-20000 դրամով

դ) խաբված ավանդատուների վնասների փոխհատուցմանը

- Արդեն 2008թ. օտարերկրյա ներդրումների ավելացում մինչեւ 1 միլիարդ դոլար եւ 150 հազար աշխատատեղերի ստեղծում միջին ամսական 90000 դրամ վարձատրությամբ՝ արհեստական մենաշնորհների վերացման եւ մրցակցության հաստատման ճանապարհով

## 4. Որակյալ եւ մատչելի առողջապահության ապահովում

- Առողջ մարդ, առողջ ապրելակերպ, մատչելի եւ որակյալ բժշկական ծառայություններ
- Առողջության արդյունավետ պետական քաղաքականության իրականացում, պարտադիր բժշկական ապահովագրության ներդրում

## 5. Տնտեսական զարգացում

- Գերակա ոլորտ ճանաչված տեղեկատվական եւ բարձր տեխնոլոգիաների զարգացում
- Համաշխարհային շուկայում ՀՀ մրցակցային դիրքերի ամրապնդում
- Տեղական հումքի վրա հիմնված ռեսուրսախնայողական եւ գիտատար արդյունաբերության զարգացման խթանում
- Պետության ինքնիշխանության եւ անվտանգության լուրջ գրավական հանդիսացող գյուղական համայնքների կայուն զարգացում

## 6. Գիտության եւ ինովացիաների զարգացում

- Գիտության զարգացումը ազգային հպարտության խնդիր է, տնտեսության առաջընթացի, աղքատության հաղթահարման ու նոր աշխատատեղերի ստեղծման, ազգային անվտանգության ամրապնդման, երկրի մրցունակության եւ միջազգային հեղինակության բարձրացման գրավականը
- ՀՀ պետական բյուջեում գիտության ֆինանսավորման մեծացում ՀՆԱ-ի 3%-ի, իսկ կրթության ոլորտի՝ ՀՆԱ-ի 5,5%-ի չափով

## 7. Որակյալ եւ մատչելի կրթության ապահովում

- Սահմանադրությամբ ամրագրված միջնակարգ կրթություն՝ որպես քաղաքացու իրավունք եւ պարտականություն
- Հանրապետության բոլոր քաղաքներում եւ գյուղերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի ապահովում
- Պայքար բոլոր մակարդակներում կոռուպցիոն երեւույթներ ծնող պատճառների վերացման համար

## 8. Արվեստի եւ մշակույթի զարգացում

- «Մշակույթն ազգի ոգին է» նշանաբանի մարմնավորում
- Օրենսդրական դաշտի ձեւավորում եւ գործնական քայլերի միջոցով ազգային մշակույթի պահպանման եւ զարգացման նպաստավոր պայմանների ստեղծում

## 9. Երիտասարդության կայացում եւ սպորտի զարգացում

- Երիտասարդության համար ոգու արժեքի գերակայություն՝ նյութապաշտության հանդեպ, ազատության արժեքի գերակայություն՝ անազատության հանդեպ, իրավունքի արժեքի գերակայություն՝ կամայականության հանդեպ եւ ժողովրդավարության արժեքի գերակայություն՝ մենիշխանության հանդեպ
- Առողջ մարմին-առողջ հոգի-առողջ սերունդ բանաձեւի արմատավորում

## 10. Ազգային անվտանգություն եւ պաշտպանություն

- Ժողովրդավարական քաղաքական համակարգ եւ քաղաքացիական հասարակություն
- Մրցունակ եւ ազատական տնտեսություն
- Անվտանգության եւ իրավապահ արհեստավարժ մարմիններ
- Մարտունակ, հզոր եւ միջազգային չափանիշներին համապատասխանող բանակ

## 11. Արտաքին քաղաքականության առաջնահերթություններ

- Հայաստանի լիակատար կայացում՝ իբրեւ ինքնիշխան, իրավական, ժողովրդավարական եւ ինքնաբավության նվազագույն աստիճանն ապահովող պետություն
- Եվրամիությանը Հայաստանի անդամակցություն՝ որպես արտաքին եւ ներքին քաղաքականության հիմնական եւ հեռահար ուղղություն
- Բոլոր հարեւան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման եւ ընդլայնման ձգտում, Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացում
- Արցախյան հիմնախնդրի լուծում հակամարտության կողմերի միջազգայնորեն ստանձնած պարտավորության՝ խաղաղ կարգավորման շրջանակներում, ԼՂՀ լիիրավ մասնակցությամբ, հասարակությունների իրազեկման, ներգրավման եւ համաձայնության ուղով, բանակցություններում առանց որեւէ նախապայմանի՝ հաշվի առնելով խնդրի իրավական եւ քաղաքական հիմքերն ու իրական պայմանները

## 12. Բնական պաշարների օգտագործում եւ շրջակա միջավայրի պաշտպանություն

- Հայկական բնաշխարհը եւ բնական պաշարները մեր ազգային հարստությունն են, որը պետք է պահպանենք, օգտագործենք եւ ժառանգենք մեր սերունդներին՝ ի նպաստ երկրի ու ժողովրդի բարեկեցության
- Շրջակա միջավայրի պահպանման լավագույն քաղաքականությունն ի սկզբանե լարվածության օջախներից հնարավորինս խուսափելն է, քան դրանց դեմ հետագայում պայքարելը